ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

«ՍԱՐԱԼԱՆՋԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2028 թթ

Դպրոցի տնօրենի հավակնորդ՝
Արմենուհի Այյոշայի Հովհաննիսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 5

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ 6

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 9

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 10

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 11

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ և ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 13

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՄ-Ի,ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ,ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ 14

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ 15

ՏՀՏ և ԱՅԼ ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ 16

ԿՐԹԱԿԱՆ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 17

ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ,ՆԵՐԱՌԱԿԱՆ և ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 19

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ,ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 20

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 20

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ,ՆՊԱՏԱԿՆԵՐ, ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ 22

ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ և ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ 28

ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ 29

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ 29

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ 30

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ 31

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ,ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ և ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ 32
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ 32
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ ԸՍՏ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ 33
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 34
ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ 35

ՆԱԽԱԲԱՆ

Սարալանջի հիմնական դպրոցի զարգացման ծրագիրը ուսումնական հաստատության ռազմավարական փաստաթուղթն է,որի հիման վրա պլանավորված է դպրոցի՝ 2023-2028թթ. զարգացման տեսլականը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածությունունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Արագ փոփոխվող աշխարհն իր անմիջական ներգործությունն է ունենում հանրակրթական դպրոցի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ:

Այսօր, առավել քան երբևէ, որակյալ մասնագետների պահանջարկն առաջնահերթ է դարձնում աշխատանքային շուկայի պահանջներին արագորեն հարմարվելու և տեղաշարժվելու կարողությունը:

Պետության և ազգի կայացման, հզորացման գործում շատ կարևոր է ազգային-պետական մտածելակերպ, քաղաքացիական կեցվածք ունեցող, սեփական երկրի ճակատագրով մտահոգ, կյանքի դժվարություններին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը: Այս գործոններով պայմանավորված հանրակրթության ոլորտում անհրաժեշտ է դառնում ուսուցման ավանդական մոտեցումների հետ միասին ստեղծագործաբար մոտենալ կյանքի առաջադրած խնդիրներին,կատարել որոշակի կառուցվածքային և բովանդակային փոփոխություններ, շարունակել բարձրացնել ՏՀՏ-ի դերը կրթական համակարգում:

ՀՀ Արագածոտնի մարզի <<Սարալանջի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիրը կազմված է 2023-2028 թվականների համար:

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

«Հանրակրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող, Հանրակրթության պետական կրթակարգին համապատասխան անձի ուսուցման և զարգացման գործընթաց է,որը նպատակաուղղված է երեխայի, սովորողի մտավոր, նրաանձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքին նախապատրաստմանը, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը» :

Հանրակրթության մասին ՀՀ օրենք

Հիմնական դպրոցի համար ցանկալի ապագայի մտապատկերը սովորողներին ազգային հենքի վրա և հիմնական որակյալ կրթություն տալն է: Այդ կրթության նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված անհատների ձևավորումն է , որոնք կարող են իրենց կրթությունը շարունակել կրթության ոլորտի հաջորդ աստիճաններում:

Դպրոցի առաքելությունը իրականացնելու գերխնդիրը կրթականարդյունավետ գործիքների միջոցով սովորողներին՝ իրենց ձգտումների և ընդունակություններին համապատասխան անընդհատ ինքնակատարելագործվելու և առաջընթաց ապահովելու հնարավորություն ստեղծելն է:

Դպրոցի Զարգացման Ծրագրի կազմման ընթացքում բովանդակության ապահովվման մեջ հաշվի եմ առել անհրաժեշտ բոլոր բաղադրիչների առանձնահատկությունները: Դրանք են՝ ֆինանսական , նյութատեխնիկական միջոցներ, կադրային ներուժ, տեղեկատվության ապահովում, դասավանդման տեխնոլոգիաներ և զարգացման ծրագրի բաղադրիչներ:

Ընդհանուր Պատկեր

<<Արագածոտնի Մարզի Սարալանջի Հիմնական Դպրոց>> ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիր, 2023-2028 թվականներ

Դպրոցում Ո՞վ պետք է սովորի

Ինչպիսի պայմաններեր պիտի ստեղծել դպրոցում

Դպրոցում Ո՞վ պետք է սովորեցնի

Կրթության արդյունավետության բարձրացում

Ի՞նչ և ինչպե՞ս սովորեցնի

Դպրոցի զարգացման հեռանկարների մշակում

Դպրոցում ո՞վ պետք է սովորեցնի.
Ուսուցիչ, ով

- Գերազանզ տիրապետում է իր առարկային և շարունակաբար մասնագիտորեն զարգանում է
- Կարևորում է դպրոցի դերը բազմակողմանի քաղաքացի ձևավորելու գործում
- Տիրապետում ՏՀՏ գործիքներին

- Իրականացնում է համագործակցային ուսուցում



ՀՀ Արագածոտնի մարզի Սարալանջի հիմնական դպրոցի հնգամյա զարգացման ծրագիրը կազմվել է հիմքում ունենալով հանրակրթության ոլորտը կանոնակարգող հետևյալ իրավական ակտերը.

- <<Կրթության մասին>>, <<Հանրակրթության մասին>>, <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին,<<Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենք>>, <<Գնումների մասին

ՀՀ օրենք>>,ՀՀ աշխատանքային օրենսգիրք,<<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ՀՀ օրենք>>, այլ օրենքներ և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտեր

- ՀՀ Կառավարության սահմանած << Հանրակրթության պետական չափորոշիչ>>
- ՀՀ Արագածոտնի մարզի << Սարալանջի հիմնական դպրոց>>ՊՈԱԿ-ի կանոնադրություն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դպրոցը տիպային է, հիմնադրվել է 2003 թվականին: Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 17/01/2003 թվականին:

Գրանցում N 49.210.00251

ՀՎՀՀ 05201711

Մասնակի վերանորոգվել է 2020թվականին:

Դպրոցն ըստ ՀՀ ԿԳՆ 2010 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1727/Ա/Ք հրամանով տրված N0084/տարրական/ և N0079/հիմնական/ լիցենզիաների՝ իրավունք ունի իրականացնելու տարրական ընդհանուր առաջին աստիճան 50 սահմանային տեղով, հիմնական ընդհանուր երկրորդ աստիճան 50 սահմանային տեղով մինչև 100 աշակերտ/տեղ հզորությամբ:

Շենքը մեկհարկանի է, ունի 0,4 հա դպրոցամերձ բակ: Ջեռուցումը՝ էլեկտրականությամբ:

2022-2023 ուս. տարում դպրոցն ունի 17 աշակերտ, կոմպլեկտավորվել է չորս դասարան:Չկան ներառական աշակերտներ:Դպրոցում այսօր առկա է ինը դասասենյակ, մեկ գրադարան(հարմարեցված), մեկ ճաշարան, մեկ պահոց-սենյակ, մեկ համակարգչային սենյակ,մեկ ուսուցչանոց,երեք սանհանգույց, որոնք գործում են:

Առկա է մեկ բազմաֆունկցիոնալ սարք (տպիչ) և ութ դյուրակիր համակարգիչ, որոնցից չորսը ունեն վերանորոգման կարիք և մեկ պրոեկտոր:Դպրոցը ապահովված է ինտերնետ կապով:Չունի լաբորատորիա,մարզադահլիճ և մարզագույք:

Դպրոցի աշխատակազմի թիվը 15-ն է , որոնցից ուսուցիչների թիվը 10-ն է: Նրանցից ութը բարձրագույն կրթություն ունեն, երկուսը՝ միջնակարգ մասնագիտական:Ուսուցիչների շաբաթական միջին ծանրաբեռնվածությունը կազմում է 15.6 ժամ, ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը ½ է:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԱՐԻՔԱԿԱԶՄԸ

ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ	ԹԻՎԸ

Մինչև 30 տարեկան	1 ուսուցիչ
40-50 տարեկան	3 ուսուցիչ
50-ից բարձր	6 ուսուցիչ

ՀԱՍՏԻՔԱԿԱԶՄ

ՀԱՍՏԻՔ	ԴՐՈՒՅՔ
Տնօրեն	1
Մանկավարժական հաստիքներ	
ԴԱԿ	0.5
Գրադարանավար	0.5
Ուսումնաօժանդակ Անձնակազմ	
Օպերատոր	0.5
Դռնապան	0.5
Հավաքարար	1
Պահակ	2
Հաշվապահ	0.5

Դպրոցի հիմնական խնդիրները հասկանալու և իրատեսական նպատակներ առաջադրելու նպատակով, ինչպես նաև դպրոցի ուժեղ և թույլ կողմերը բացահայտելքւ համար հանդիպումներ եմ ունեցել դպրոցի մանկավարժական և ծնողական,աշակերտական խորհուրդների հետ, որոնց առաջարկությունները, կարծիքները և դիտարկումները հնարավորինս արտացոլել եմ դպրոցի զարգացման ծրագրում:

1.ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

1.1 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ Կողմեր	• ***Տիպային,մեկ հարկանի քարե ամուր շենք*** • ***Շենքային բավարար պայմաններ*** • ***Կանաչապատ ընդարձակ տարածք/0,4ՀԱ*** • ***Գործող սանհանգույցների առկայություն***

	• Վերանորոգված թիթեղապատ տանիք • Մետալլաստե պատուհաններ և դռներ • Սեյսմիկ դիմակայունությունը բավարար • Բավարար քանակով դասասենյակների առկայություն/9սենյակ/
Թույլ Կողմեր	• Մարզադահլիճի և բացօթյա մարզահրապարակի բացակայություն • Հանդիսությունների սրահի բացակայություն • Լաբորատոր սենյակի բացակայություն • Լոկալ ջեռուցման բացակայություն • Ապաստարանի բացակայություն • Կոյուղագծերի ոչ բարվոք վիճակ
Հնարավորություններ	• Տարածք՝ բացօթյա մարցահրապարակի համար • Տարածքի ցանկապատում • Կոյուղագծերի վերանորոգում
Ռիսկեր	• Ֆինանսական սահմանափակ հնարավորություն • Այլ ֆինանսական միջոցների հայթայթման դժվարություն

1.2 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	• ***Պռոեկտորի առկայություն*** • ***Ինտերնետ կապի առկայություն*** • ***Հարմարեցված ճաշարանի գույքով ապահովվածություն*** • ***Ջեռուցման սարքերի առկայություն/ջեռոցներ/***
ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ	• ***Ուսուցչանոցի թերի կահավորում*** • ***Լաբորատոր սարքավորումների և դիդակտիկ նյութերի բացակայություն*** • ***Առկա համակարգիչները ենթակա են վերանորոգման*** • ***Դպրոցական գույքի ոչ բարվոք վիճակ***
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	• ***ՏՀՏ միջոցների*** • ***Տեխնիկական ապահովածության գույքի ձեռքբերման*** • ***Աշխատանքային և գրենական պիտույքների*** • ***Մարզական սարքերի*** • ***Առաջին բուժօգնության պարագաների***
ՌԻՍԿԵՐ	• ***Սահմանափակ ֆինանսական միջոցներ*** • ***Ֆինանսական այլ միջոցների հայթայթման դժվարություններ***

ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ՝ կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր,ներքին իրավական ակտեր

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	• ***Դպրոցում առկա է պարտադիր գործունեության երաշխավորված փաստաթղթեր և իրավական փաստաթղթեր,դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտեր*** • ***Կանոնադրություն*** • ***Ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան***

	• *Ուսումնական պլան* • *Հաշվետվություններ* • *Արձանագրություններ* • *Ներքին կարգապահական կանոններ*
Թույլ Կողմեր	• *ԿԳՄՄՆ-ի կողմից պարբերաբար հայտարարվող կամ փոփոխվող իրավական ակտեր*
Հնարավորություններ	• *Պարբերաբար դասընթացների կամ վերապատրաստումների միջոցով տեղյակ պահել կրթական ոլորտում կատարվող փոփոխություններին*
Ռիսկեր	• *Հանրակրթության մասին օրենքում տեղի ունեցող արագ փոփոխությունների ոչ ճիշտ ընկալումը*

1.3 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ Կողմեր	• *Իրականացվում է դպրոց, ընտանիք, համայնք փոխհամագործակցության ուղիների բարելավման միջոցառումներ* • *Ցուցաբերում է մասնակցություն համայնքային միջոցառումներին և միջոցառումներին* • *Ծնողական խորհրդի առկայություն* • *Համագործակցում է ԿԳՄՄՆ-ի , ԳԹԿ-ի, ԿՁՆԱԿ-ի , Արագածոտնի մարզպետարանի, ԱԻՆ-ի, World Vision-ի և այլ կառույցների հետ*
Թույլ Կողմեր	• *Կա անհրաժեշտություն ընդլայնելու համագործակցության շրջանակները* • *Սահմանափակ է համագործակցությունը մշակութային կենտրոնների հետ* • *Ծնողների ոչ բավարար ընդգրկվածություն*
Հնարավորություններ	• *Ծնողներին ակտիվորեն ներգրավել դպրոցի դաստիարակչական գործընթացում* • *Ուժեղացնել աշակերտ-ծնող-ուսուցիչ-համայնք կապը* • *Ծնողների ակտիվ աջակցություն համայնք-ծնող-դպրոց կապի*

	ամրապնդմանը • *Համայնքային միջոցառումներին առավել ակտիվ մասնակցություն*
Ռիսկեր	• *Ծնողների կողմից հետաքրքրվածության բացակայություն*

1.4 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ,ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ,ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ,ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	• *2021-ին ձևավորվել և գործում է Միացյալ Կառավարման Խորհուրդ* • *Կառավարման խորհրդի անդամները վերապատրաստվել են և ստացել են հավաստագրեր* • *Առկա է Կառավարման խորհրդի արձանագրությունների մատյան* • *Կառավարման խորհուրդի նիստերը հրավիրվում են ըստ սահմանված կարգի*
ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ	• *Կառավարման խորհրդի մեծ մասը այլ բնակավայրերից են* • *Նախաձեռնողականության բացակայություն* • *Հաշվետվությունների պասիվ ունկնդրում* • *Ֆինանսական միջոցներ հայթայթելու մոտիվացիայի բացակայություն*
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	• *Առավել համակարգված գործելու հնարավորություն* • *Տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում*
ՌԻՍԿԵՐ	• *Խորհրդի նիստերին անդամների պարբերական բացակայություն*

1.5 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Ուժեղ Կողմեր	• *Մանկավարժների և աշակերտների գործունեությունը փոխկապակցված է* • *Մանկավարժներն օժտված են անհրաժեշտ մասնագիտական կարողություններով և հմտություններով* • *Մանկավարժներն անցել են վերապատրաստումներ և ապահովված են առարկայական ծրագրերով և ուսումնամեթոդական գրականությամբ* • *Ուսուցիչների երկարաժամկետ աշխատանքային փորձը* • *Մանկավարժական աշխատանքի նկատմամբ բարձր կարգապահություն* • *Մանկավարժ- աշակերտ համագործակցությունը ½ է* • *Մանկավարճները մեթոդապես պատրաստված են, կարողանում են պլանավորել դասերը և միջացառումները* • *Պարբերաբար կազմակերպվում են սեմինար պարապունքներ, իրանակացվում է լավագույն փորձի փոխանակում*
Թույլ Կողմեր	• *Երիտասարդ կադրերի սակավություն* • *Տարակարգ ունեցող ուսուցիչների բացակայություն* • *Ժամանակակից մեթոդների և ՏՀՏ գործիքների ոչ ամբողջական տիրապետում* • *Փորձի փոխանակման և փոխադարձ դասալսումների պակաս*

	• *Ուսուցիչների խրախուսման միջոցների պակաս*
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	• *Ուսուցիչների մասնակցություն և ներգրավվածությունը ԿԶՆԱԿ-ի պաշարների շտեմարանին* • *Համակարգչային բավարար գրագիտություն չունեցող ուսուցիչների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպման* • *Նորագույն մեթոդների ներդրման*
ՌԻՍԿԵՐ	• *Լավագույն կադրերի արտահոսք* • *Ցածր վարձատրություն*

1.6 ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	• *Ուսուցման կազմակերպում՝ օգտագործելով էլեկտրոնային կրթական պաշարներ* • *Ըստ անհրաժեշտության հեռավար ուսուցում կազմակերպել MS Teams կրթական հարթակի միջոցով* • *Ուսուցիչների կողմից ՏՀՏ համակարգի նպատակային կիրառում* • *Պռոեկտորի առկայություն,* • *Չորս գործող համակարգիչների առկայություն*
ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ	• *Պահպանողական մտածելակերպ և վերաբերմունք ուսուցիչների շրջանում ՏՀՏ-ի մկատմամբ*

	• *Տեխնիկական հագեցվածության պակաս* • *Ինտերնետ հնարավորությունների ոչ բավարար օգտագործում* • *Համակարգիչների մաշվածություն*
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	• *Հեռավար դասընթացների մասնակցության հնարավորություն* • *Ինտերնետ հնարավորությունների ընդլայնում*
ՌԻՍԿԵՐ	• *Պահպանողական վերաբերմունք նորարական փոփոխությունների նկատմամբ*

1.7ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	• *Ընթացիկ ավարտական գնահատականների բարձր ցուցանիշներ* • *Համայնքում դպրոցի*

	բարձր հեղինակություն և վարկանիշ • *Ազգային ավանդույթների, ծեսերի արմատավորում և պահպանում* • *Աշակերտների բարձր կարգապահություն և հաճախելիություն* • *Բարձր հեղինակային վարկանիշ ունեցող ուսուցիչներ* • *Աշակերտների անձնային աճի անհատական քարտերի ստեղծում* • *Դպրոցում տարածել լավագույն ուսուցիչների փորձը*
<u>Թույլ Կողմեր</u>	• *ՏՀՏ-ների ոչ ճիշտ և նպատակային կիրառությունը* • *Լաբորատոր սենյակների բացակայություն* • *Աշակերտների կարողունակությունների թույլ զարգացվածություն*
<u>Հնարավորություններ</u>	• *Տարբեր տեսակի կրթական ռեսուրսների հասանելիություն* • *<<ԱՐՄԱԹ>> ինժեներական լաբորիատորիաների ստեղծում* • *Ձեռնարկատիրական և լրացուցիչ ֆինանսական կրթության իրականացում*
<u>Ռիսկեր</u>	• *Լավագույն ուսուցչական կադրերի արտահոսք՝ ցածր վարձատրության*

	պատճառով • *Կրթության նկատմամբ հետաքրքրության աստիճանաբար նվազում*

1.8ԲԱՁՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմեր	• *Աշակերտները ազատորեն արտահայտում են սեփական կարծիքները և տեսակետները* • *Աշակերտական խորհուրդի ներկայացուցիչը մասնակցում է մանկավարժական խորհուրդի՝ աշակերտներին վերաբերող հարցերի քննարկմանը* • *Բարձր արժեհամակարգ ձևավորելու համար իրականացվում են տարբեր միջոցառումներ, էքսկուրսիաներ և այցելություններ*
Թույլ Կողմեր	• *Ներառական կրթության համար պայմանները բավարար չեն* • *Հատուկ մասնագետների բացակայություն՝ հոգեբան,լոգոպետ և սոց մանկավարժ և ուսուցչի օգնական*
Հնարավորություններ	• *Ներառական կրթության միջավայրի ձևավորում*
Ռիսկեր	• *Ֆինանսական միջոցների պակաս*

1.9 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ,ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ուժեղ Կողմեր	• ***Մանկավարժական արդյունավետ աշխատանքների խրախուսում, պարգրավճարների տրամադրում*** • ***Ստեղծագործող մանկավարժների փորձի տարածում և խրախուսում*** • ***Վերապատրաստումների պարբերաբար իրականացում*** • ***Սեմինարների, խորհրդատվության միջոցով մանկավարժական որակների կատարելագործում***
Թույլ Կողմեր	• ***Ուսուցիչների ատեստավորման թույլ մոտիվացիա***
Հնարավորություններ	• ***Ուսուցիչների նախապատրաստում ատեստավորման***
Ռիսկեր	• ***Ինքնազարգացման թույլ մոտիվացիա***

1.10 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ, ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՇԵՂՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Ուժեղ Կողմեր	• *Պետական բյուջեից կանոնավոր և ժամանակին ֆինանսավորում* • *Գրենական պիտույքների և դիդակտիկ պարագաների համար նախատեսված ֆինանսեր*
Թույլ Կողմեր	• *Դպրոցի ֆինանսական միջոցները բավարար չեն մեծածախ գույք ձեռք բերելու և վերանորոգման համար* • *Չկան արտաբյուջետային միջոցներ*
Հնարավորություններ	• *Համագործակցության կրթական հիմնադրամների, անհատ բարեգործների և կազմակերպությունների հետ*
Ռիսկեր	• *Ֆինանսական միջոցների սղություն*

2.ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ, ՆՊԱՏԱԿՆԵՐ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

Ոլորտ	Հիմնախնդիր	Նպատակ
1.Ուսումնական ֆիզիկական միջավայր	Նյութատեխնիկական բազայի բացակայությունը, դպրոցի շենքային պայմանները բացասաբար են ազդում ուսուցման գործընթացի և որակյալ կրթության ապահովման վրա:	Շենքային բավարար պայմանների ստեղծում՝ դպրոցում կրթական կարիքների և սովորողների անվտանգության ապահովման համար:

2. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր	ԿԳՄՍՆ-ի կողմից դպրոցն ունի պարտադիր գործածության անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը,բայց դրանք համապատասխանեց ված չեն կառուցվածքային առանձնահատկությունններին: Մանկավարժների կողմից իրավական ակտերի ոչ լիարժեք իրազեկվածությունը ազդում է աշակերտների առաջադիմության, դպրոցի վարկանիշի և ուսուցիչների կարգապահության վրա:	Դպրոցի վարկանիշը,դպրոցում կրթական կարիքները ապահովող նորմատիվային փաստաթղթերի ստեղծում: Նորմատիվ իրավական ակտերին համապատասխան դպրոցի գործունեության կազմակերպման ապահովում:
3. Կառավարման և խորհրդակցական մարմիններ	-Խորհրդի անդամների կողմից նախաձեռնություններ ի պակասը բացասաբար է ազդում դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման և ներդպրոցական, վերահսկողական մեխանիզմների վրա: -Մեթոդմիավորման նախագահի կողմից նիստերի կազմակերպման սակավությունը բերում է նրան, որ ուսուցիչները առանձնակի հետևողականություն չեն ցուցաբերում այդ հարցին, քանի որ դա հավելյալ աշխատանք է:	-Մեթոդմիավորման նախագահների համար կազմակերպել սեմինարներ մեթոդմիավորման աշխատանքները ճիշտ պլանավորելու և կազմակերպելու համար: -Կառավարման և խորհրդակցական մարմինների ակտիվ համագործակցության նպաստում և դպրոցի կառավարման արդյունավետության բարձրացում:

4. Աշակերտական համակազմ	-Երկրին և հասարակությանը պիտանի քաղաքացի ձևավորման պահանջ: -Ուսման նկատմամբ մոտիվացիայի պակասը բացասաբար է ազդում սովորողների դաստիրակության և ուսուցման վրա:	-Ուսումնական գործընթացում սովորողների մոտիվացիայի և ակտիվացման խթանում: -Հավասարակշռված, հայրենասեր, նախաձեռնող ,գիտելիքներով հարուստ, մեծ պատասխանատվություն ունեցող անհատի ձևավորում:
5. Մանկավարժական համակազմ	Ուսուցիչների մեծ մասը գտնում է, որ օրվա դասի պլան գրելը պարտադիր չէ այն պատճառով , որ տիրապետում է իր առարկային: Նրանք չեն ընդունում ուսումնական մեթոդների արդյունավետությունը և չեն կիրառում դասապրոցեսում: Ամենօրյա դասապրոցեսում նոր տեխնոլոգիաների կիրառման, դասալսումների իրականացման և ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ շերտավոր ուսուցումը նվազեցնում է ուսուցման արդյունավետությունը:	Մանկավարժների մասնագիտական զարգացման շարունակության ապահովում: Իրազեկ, կոմպետենտ և աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու անձնակազմի ձևավորում:

6. Ուսումնական միջավայրը	Դպրոցական բաղադրիչի ժամերը պետք է հատկացվեն այն առարկաներին, որոնցից դժվարանում են աշակերտները: Աշակերտ-ծնող-ուսուցիչ թույլ կապը կդառնա սովորողների առաջադիմության անկման և աշակերտների արտահոսքի պատճառ:	Դպրոցի ուսումնական բաղադրիչի ժամերը համապատասխանեցնել դպրոցում սովորողների կարիքին: Առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորում դպրոցում:
7. Կրթության որակը	Երբ դպրոցում մշակված չէ մանկավարժների աշխատանքի կազմակերպման հստակ մեխանիզմ, և կատարվող աշխատանքները ձևական են, առաջանում են ուսման որակի հետ կապված լուրջ խնդիրներ: Երբ ուսուցիչները աշխատանքի են ներկայանում մի այն առաջին դասն սկսելուց առաջ և վերջին դասը պարապելուց հետո անմիջապես հեռանում են դպրոցից, երբ տնօրենի տեղակալներըբավարար ուշադրություն չեն դարձնում և չեն արձագանքում ուսուցիչների կողմից աշխատանքային կարգապահության խախտումն երին, երբ չի կատարվում վերլուծական	Մանկավարժների կարգապահությունը և պատասխանատվությունը ապահովող մեխանիզմների ներդրում:

	աշխատանք, և հիմք է ընդունվումուսուցչի ինքնագնահատում ը մի այն, դպրոցը չիապահովում առաջընթաց, զարգացում, չիհասնում հաջողությունների: ՈՒսուցիչների ժամանակին աշխատանքի չներկայանալը , կարգապահական կանոններին ուշադրություն չդարձնելը, վերլուծական աշխատանքներ չկատարելը կառաջացնի ուսման որակի հետ կապված խնդիրներ, դպրոցը չի հասնիհաջողությունների:	

8.Նորարարություններ և տեխնոլոգիաներ	Ուսուցիչների մոտ համակարգչային գիտելքիների, տեխնիկայի տիրապետելու հմտությունների պակասը խոչընդոտում է ուսման որակի ապահովելուն: Տարիքով ուսուցիչների մոտ կա կարծիք, որ դա երիտասարդների գործն է և ՏՀՏ-ի կիրառումը դասի ընթացքում կրում է ձևական բնույթ:Միևնույն ժամանակ աշակերտները ՏՀՏ-ն լայնորեն օգտագործում են առօրյայում օգտագործում են, որպես տեղեկություն ստանալու միջոց:	Դասի արդյունավետության բարձրացում նորամուծությունների ներդրման և ՏՀՏ կիրառման միջոցով:
9.Համագործակցությունը համայնքի և շահառու կազմակերպությունների հետ	Համայնքի, կրթական և շահառու կազմակերպությունների համագործակցության թույլ շրջանակը խանգարում է սովորողների հասարակական կյանքին ինտեգրվելու հարցում:	Դպրոցի և համայնքի կրթության կառավարման ղեկավար մարմինների միջև համագործակցության ամրապնդում և դպրոցի գործունեության բարելավմանը նպաստող համագործակցության շրջանակների ընդլայնում:

ՆՊԱՏԱԿՆԵՐ,ԽՆԴԻՐՆԵՐ,ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ,ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ,ԺԱՄԿԵՏՆԵՐ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ և ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

ՆՊԱՏԱԿ -Դպրոցում ստեղծել դաստիարակչական և ուսումնական բարենպաստ պայմաններ պահպանելով սովորողների առողջությունը և ֆիզիկական զարգացումը

Խնդիր 1	• *Դպրոցը համալրել նոր գույքով, կատարել կոսմետիկ վերանորոգում*
Գործողություններ	• *Դիմել տարածքային կառավարման լիավորված մարմնի ղեկավարին* • *Փնտրել բարեգործական կազմակերպություններ և բարերարներ*
Ակնկալվող արդյունք	• *Ուսումնական դասապրոցեսի արդյունավետ կազմակերպման համար կապահովվեն առավել նպաստավոր պայմաններ*
Պատասխանատուներ	• *Տնօրեն, համակորգող*
Ժամկետներ	• *2023-2028 թվական*
Նյութատեխնիկական միջոցներ	• *Պետական միջոցներ,բարերարներ, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ*

Խնդիր 2	• *Լոկալ ջեռուցում անցկացնել՝ դպրոցում ապահովելով բավարար ջերմային պայմաններ*
Գործողություններ	• *Դիմել լիազորված մարմնի ղեկավարին , ներգրավվել բարերաներ կամ բարեգործական կազմակերպություններ*
Ակնկալվող արդյունք	• *Ջերմային ռեժիմի ապահովում սովորողների արդյունավետ դասընթացները կազմակերպելու և անցկացնելու համար*
Պատասխանատուներ	• *Լիազորված մարմին, տնօրեն, համակարգող*
Ժամկետներ	• *2023-2028 թվական*

Նյութատեխնիկական միջոցներ	• *Պետական և օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ, բարերարներ*

2. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ՝ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

ՆՊԱՏԱԿ -Նորմատիվ իրավական ակտերի համապատասխան դպրոցի գործունեության կազմակերպման ապահովում

Խնդիրներ	*Հետամուտ լինել դպրոցի գործունեությունը կանոնակորգող իրավական ակտերում կատարված փոփոխություններին*
Գործողություններ	*Յուրաքանչյուր շաբաթ ԿԳՄՄՆ-ի կայքում հետևել նորմատիվ իրավական ակտերի հրապարակումներին* *Ստուգել դպրոցում առկա փասթաթղթերի հետ և անընդհատ թարմացնել փասթաթղթերի թղթապանակները* *Նոր կարգերին իրազեկ լինելու նպատակով մասնակցել լիազորված մարմնի կողմից հրավիրվող խորհրդակցություններին , սեմինարներին ու քննարկումներին*
Ակնկալվող արդյունք	*Իրավական ակտերի դրույթներին համապատասխան կկազերպվի դպրոցի կառավարման գործընթացը*
Պատասխանատուներ	*Տնօրեն, համակարգող*
Ժամկետներ	*2023-2028 թվական*
Նյութատեխնիկական միջոցներ	*Վճարովի դասընթացներին մասնակցելու համար ֆինանսական միջոցներ,* *ՏՀՏ միջոցներ, համացանցի առկայություն*

3. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Նպատակ-Դպրոցի կառավարման արդնունավետության բարձրացում և ակտիվ համագործակցություն

Խնդիրներ	*Դպրոցի կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների հետ ակտիվ համագործակցություն* *Բարձրացնել դպրոցի կոլեգալ խորհրդի կառավարման դերը դպրոցի համագործակցության աշխատանքներում*
Գործողություններ	*Իրավունքի և լիազորության սահմաններում ապահովել խորհրդի անդամների մասնակցությունը դպրոցի կրթական ծրագրերին ու միջոցառումներին* *Լիազոր մարմնին ներկայացնել առաջարկություններ դպրոցի գործունեության*

	բնագավառներին,նպատակներին,խնդիրներին *Ուս. տարվա վերջում խրախուսել նախաձեռնություններով հանդես եկողներին* *Ծնողական խորհրդի նիստերի ժամանակ լսել ծնողների առաջարկությունները*
Ակնկալվող արդյունք	*Կառավարման խորհրդակցական մարմինների լավագույն փորձի բացահայտում,* *Առավել արդյունավետ կառավարում*
Պատասխանատուներ	*Տնօրեն, խորհրդակցական մարմիններ*
Ժամկետներ	*2023-2028 թվական*
Նյութատեխնիկական միջոցներ	*Լրացուցիչ և օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ, պետբյուջե*

4.ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Նպատակ- **Հավասարակշռված, հայրենասեր, նախաձեռնող ,գիտելիքներով հարուստ, մեծ պատասխանատվություն ունեցող անհատի ձևավորում:**

Խնդիրներ	*Աշակերտների մոտ մեծացնել սովորելու նկատմամբ հետաքրքրությունը, խթանել նորարարական միտքն ու ստեղծագործական ունակությունները:*
Գործողություններ	*Հրավիրել լավագույն փորձ ունեցող մասնագետներ,դասերը կազմակերպել կիրառելով ՏՀՏ միջոցներ:Ծնողական ակտիվի միջոցով կազմակերպել արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներ:* *Դպրոցում նշել հիշատակության օրերը և պետական տոները:* *Բարձր կարգապահության օրինակելի վարքի , գերազանց ուսման համար տարեվերջում խրախուսել սովորողներին:* *Սովորողներին ընդգրկել դպրոցամերձ տարածքի մաքրության և բարեկարգման գործում:* *Ուսումնառության ընթացքում լսել աշակերտական խորհրդի առաջարկությունները:*
Ակնկալվող արդյունք	*Ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացում* *Սովորողների մոտիվացիայի խթանում*
Պատասխանատուներ	*ԴԱԿ, դասղեկներ, աշակերտական խորհուրդ, դպրոցի համակազմ*
Ժամկետներ	*2023-2028 թվական*
Նյութատեխնիկական	*Լրացուցիչ և օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ*

Միջոցներ	

5.ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Նպատակ- **Իրազեկ, կոմպետենտ և աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու անձնակազմի ձևավորում**

Խնդիրներ	*Մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով մանկավարժական համակազմի պարբերաբար ուղղորդել վերապատրաստումների:* *Դպրոցում ապահովել մանկավարժների ստեղծագործական գործունեության պայմաններ:* *Նպաստել ուսուցիչ-ծնող սերտ համագործակցությանը:* *Ուշադրության կենտրոնում պահել ուսուցման գործընթացում ժամանակակից և նորարարական մեթոդների, տեխնոլոգիաների կիրառումը:*
Գործողություններ	*Ամեն տարի ըստ կարգի ատեստավորման ենթակա ուսուցիչների պարտադիր վերապատրաստման գործընթացի ապահովում:* *Վերապատրաստման ավարտից հետո որոշակի ժամանակ դիտարկել վերապատրաստված ուսուցիչների դասերը, տեսական գիտելքիների կիրառումը գործնականում՝ վերլուծելով ստացած գիտելիքները կիրառումը գործնականում:* *Ստեղծել ռեսուրս-կենտրոն,մանկավարժական խորհուրդի նիստերին հրավիրել նաև աշակերտական խորհրդի նախագահին:*
Ակնկալվող արդյունք	*Գիտելիքներով հարուստ, բարձր որակավորում ունեցող մանկավարժական համակազմ:*
Պատասխանատուներ	*Լիազոր մարմին, տնօրեն,մանկավարժական համակազմ*
Ժամկետներ	*2023-2028 թվական*
Նյութատեխնիկական միջոցներ	*Պետբյուջե, օրենքով չարգելված լրացուցիչ ֆինանսավորման այլ աղբյուրներ:*

6.ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ,ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ և ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Նպատակ- **Դպրոցի գործունեության բարելավմանը նպաստող համագործակցությանապահովում**

Խնդիրներ	*Դպրոցի և համայնքում գործող մշակութային կենտրոնների համագործակցում*
Գործողություններ	*Հաճախակի դպրոցում կազմակերպել մշակութային միջոցառումներ և հանդիպումներ մշակութային կենտրոնների ներկայացուցիչների հետ:* *Կազմակերպել այցելություններ համայնքի ճանաչված մարդկանց հետ:* *Տեղական և տարածքային իշխանությունների հետ հաճախակի կազմակերպել հանդիպումներ:* *Դիմել համայնքի ղեկավարին*
Ակնկալվող արդյունք	*Համայնքի մշակութային կյանքին երեխաների ակտիվ ներգրավվախությունը*
Պատասխանատուներ	*Տնօրեն,դասղեկներ, ԴԱԿ*
Ժամկետներ	*2023-2028 թվական*
Նյութատեխնիկական միջոցներ	*Սեփական միջոցներ*

7. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Նպատակ-Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորում

Խնդիրներ	*Ծնողական,աշակերտական խորհուրդների դերերի բարձրացում:* *Դպրոցում միջանձնային հարաբերությունների բարելավում:*

Գործողություններ	*Միջոցառումների կազմակերպում:* *Ամբողջ ուս. տարվա ընթացքում էքսկուրսիաների կազմակերպում:* *Աշակերտների միջև կոնֆլիկտների լուծման միջամտություն:* *Դպրոցում բուլինգի դեպքերի հայտնաբերում և միջոցառումների ձեռնարկում:*
Ակնկալվող արդյունք	*Ուսուցիչ-ծնող-աշակերտ հարաբերություններում վստահության ամրապնդում*
Պատասխանատուներ	*Տնօրեն, ԴԱԿ, ծնողական խորհուրդ*
Ժամկետներ	*2023-2028 թվական*
Նյութատեխնիկական միջոցներ	*Պետբյուջե, օրենքով չարգելված լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրներ*

8.ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ՝ ԸՍՏ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

Նպատակ 1 - **արդի մարտահրավերներին համապատասխան կրթության որակի շարունակական բարելավում**

Խնդիրներ	*Հանրակրթության նոր չափորիշիչներով ըստ փուլերի կազմակերպել ուսումնական գործընթացը:*
Գործողություններ	*Ծանոթանալ նոր ՀՊՉ-ին:* *Վերապատրաստել ուսուցիչներին:* *Ըստ հենքային ուս. պլանի կազմել երկրորդ, հինգ, յոթ-րդ դասարանների ուս. պլանները նոր չափորոշիչներին համապատասխան և հետևել գնահատման փոփոխություններին*
Ակնկալվող արդյունք	*Որակյալ կրթություն*
Պատասխանատուներ	*Դպրոցի համակազմ,*
Ժամկետներ	*2023-2024;2024-2025; 2025-2026* **,2026-2027,20272028*թթ.***
Նյութատեխնիկական միջոցներ	*Պետական բյուջե*

Նպատակ 2-սովորողների կրթական կարողությունների կատարելագործում, հմտությունների զարգացում

Խնդիրներ	*Նոր չափորոշիչներով կազմակերպել ուսուցում ըստ չափորոշչի վերջնարդյունքների՝ սովորողների հնարավորությունների և հետաքրքրությունների* *Բացահայտել կրթական որակների խնդիրները*
Գործողություններ	*Անանուն հարցաթերթիկների միջոցով կրթության որակի գնահատում,* *Հաճախակի կազմակերպել կոնֆերանսներ, ինտելեկտուալ խաղեր սովորելու նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով:*
Ակնկալվող արդյունք	*Առկա խնդիրների բացահայտում, կարողությունների զարգացում,կրթության որակի ստուգում*
Պատասխանատուներ	*Տնօրեն,մեթոդմիավորում, աշակերտական խորհուրդ*
Ժամկետներ	*2023-2028 թվական*
Նյութատեխնիկական միջոցներ	*Պետբյուջե, օրենքով չարգելված լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրներ*

9.ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նպատակ- **Դասի արդյունավետության բարձրացում նորամուծությունների ներդրման և ՏՀՏ կիրառման միջոցով**

Խնդիրներ	*ՏՀՏ կիրառման հմտությունների զարգացում ուսուցիչների շրջանում*
Գործողություններ	*Վերապատրաստման դասընթացների կազմակերպում*
Ակնկալվող արդյունք	*ՏՀՏ-ի միջոցով աշակերտների հետաքրքրության շրջանակների ընդլայնում և դասապրոցեսի առավել արդյունավետ կազմակերպում*
Պատասխանատուներ	*Տնօրեն, ՄեթոդՄիավորումներ, դասղեկներ*
Ժամկետներ	*2023-2028 թվական*
Նյութատեխնիկական միջոցներ	*Պետբյուջե, օրենքով չարգելված լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրներ*

Դպրոցի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման վերջում կունենանք

- ✓ ուսման արդյունավետության բարձրացում՝ վարկանիշավորման ցուցանիշի բարելավում,
- ✓ դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացում, ամրապնդում, բոլոր առարկաներիդասավանդման ընթացքում ՏՀՏ-ի կիրառում
- ✓ դպրոցի գործունեությունը կանոնակարգող նորմատիվային փաստաթղթերի փաթեթի ստեղծում
- ✓ մանկավարժական համակազմի մասնագիտական որակի բարձրացում, վերապատրաստումների(այդ թվում ներառական կրթության ապահովմանը ուղղված) ու կամավոր ատեստավորման մասնակցություն,տարակարգ ունեցող ուսուցիչների քանակական աճ
- ✓ արտաբյուջետային միջոցների հոսքերի ապահովում
- ✓ ժամանակակից մեթոդներով և տեղեկատվությամբ սովորողների գործնական հմտությունների զարգացմանն ուղղված կրթական գործընթացի համալրում, ՏՀՏ-ների ներդրման և օգտագործման բարձր մակարդակ
- ✓ սովորողների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված նախադրյալների ստեղծում
- ✓ աշակերտական կառավարման համակարգի՝ ծնողների, ուսուցչական անձնակազմի և առհասարակ՝ հասարակության համար առավել բաց և մատչելի դարձնելուն ուղղված քայլերի իրականացում
- ✓ դպրոց-ընտանիք-համայնք կապի ամրապնդում, որը կնպաստի դպրոցի և կրթության նկատմամբ յուրաքանչյուր աշակերտի և իր ընտանիքի վերաբերմունքի և պատասխանատվության բարձրացմանը
- ✓ ներառական կրթության իրականցում՝ պետական չափորոշիչների պահանջներին համապատասխան որակյալ, մատչելի և հասնելի կրթության ապահովում՝ անկախ սովորողների մեկնարկային հնարավորություններից, ընդունակություններից:

Ծրագրի կատարմանը խոչընդոտող հավանական գործոններ

Ցանկացած նախաձեռնություն, միջոցառումների ծրագիր կամ առհասարակ՝ որևէ ծրագրավորված գործընթաց իր կատարման ճանապարհին անխուսափելիորեն ենթարկվում է բազմաթիվ արտաքին և ներքին գործոնների ազդեցության, որոնք կարողեն այս կամ այն կերպովխոչընդոտել նախաձեռնությանը: Դպրոցի ղեկավարությունը առանձնահատուկ ուշադրություն է դարձնելու այդ գործոնների՝ դպրոցի գործընթացներում առավելագույնս չեզոքացնելու հնարավորությանը՝ նպատակ հետապնդելով հնարավորինս անշեղորեն կատարել ծրագրված միջոցառումները:

Այդ գործոնների շարքին մասնավորապես հարկ ենք համարում դասել՝

- հավանական վտանգները՝ կապված ծրագրված խնդիրներին համարժեք ֆինանսավորման աղբյուրների սակավության և ֆինանսական ռեսուրսների անբավարարության հետ,
- ծնողի անտարբեր վերաբերմունքը դպրոցի և սեփական երեխայինկատմամբ,հասարակության մեջ բարոյական արժեքների անկման միտումները,
- հասարակության մեջ տարածում գտած այնպիսի բացասական երևույթներնինչպիսիք են՝ ծխելը, ալկոհոլիզմը, թմրամոլությունը և այլն,
- ՁԼՄ-ների միջոցով բացասական տեղեկատվության արագ տարածումը,
- աշակերտների թվի նվազումը կախված՝ա)ծնելիության անկումից
  բ) արտագաղթի մեծացումից,
  գ) դպրոցի ներքին խնդիրներով չպայմանավորված այլ գործոններից
- մանկավարժական անձնակազմի անդամների զգալի մասի մոտ առկա սոցիալ- տնտեսական խնդիրների և աշխատանքի բնույթից բխող ինտելեկտուալ ծանրաբեռնվածության և նյարդահոգեբանականլարվածության բացասական համադ-ությունը,բազմաթիվ ուսուցիչների կողմից դպրոցի առաջարկվող բարեփոխումներում ընդգրկվելու թույլ մոտիվացիան, քանի որ այն պահանջելու է մի քանի անգամ ա վելի ուժ և եռանդ, որը ցավոք չի ապահովվելու մի քանի անգամ ավելի կամ համարժեք ֆինանսական խրախուսում,
- դեռահասի հանգստի կազմակերպման հետ կապված միջոցառումներին ոչ

բավարար մասնակցությունը՝ կինո, թատրոն, թանգարան այցելելու համար անհրաժեշտ բարձր վճարների, դպրոցի սեփական տրանսպորտային միջոցի բացակայության պատճառով:

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

Դպրոցի զարգացման իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա այդ ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են: Դրա համար անհրաժեշտ է ծրագրի նպատակադրումները ամբողջությամբ արտացոլել դպրոցի տարեկան աշխատանքային պլաններում՝ ծրագրով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

Խնդիրների մեծ մասի լուծումը զգալի ֆինանսական միջոցներ չեն պահանջում, բայց պահանջում են մշտական աշխատանք և ուշադրություն, ուստի դրա համար հատուկ ժամանակացույց չի նշվում:Ծրագրի իրագործման արդյունքում ակնկալում ենք,որ կունենանք մրցունակ դպրոց,որն աշակերտների թվաքանակի խնդիր չի ունենա և կթողարկի ազատ մտածող, ինքնուրույն գործող, բարդ իրավիճակներում կողմնորոշվող,արագ հաղորդակցվող, հանդուրժող, հայ ժողովրդի և հայ մարդկության ստեղծած մշակութային արժեքները գնահատող շրջանավարտներ:

ԿԱՐԳԱԽՈՍ

ԱՆԸՆԴՀԱՏ ԻՆՔՆԱԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԸՆԹԱՑ